ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

31. հունվար 2020, № 11/4

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի՝ 2018-2019 ուստարվա գործունեության գնահատումը տեղափոխել գիտական խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:
2. Հանձնարարել ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանին՝ երկշաբաթյա ժամկետում ներկայացնելու հաշվետվության հիման վրա առաջադրված որոշման նախագիծ՝ գիտական խորհրդի անդամների կողմից կատարված դիտարկումներով ու առաջարկություններով հանդերձ:
3. Ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանին հանձնարարել՝ դպրոցի աշխատակազմով, մեկամսյա ժամկետում ներկայացնելու ավագ դպրոցի զարգացման կարճաժամկետ ծրագիր:
4. Համալսարանի կենտրոնների տնօրեններին և մասնագիտական ամբիոնների վարիչներին հանձնարարել երկշաբաթյա ժամկետում, համագործակցելով ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանի հետ՝ աջակցության նպատակով, ներկայացնելու ավագ դպրոցի հետ կապված առաջարկությունների փաթեթ:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԵՐ. ՍԵՐՈԲՅԱՆ